

մական հիմք և հայ առու <\*sreu-, Arşania, հմմտ. \*Harg-, , փայ-  
լել, / շրտավառակազմական հիմք/ ևն:

Ա.Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԳՀ

ԶԿԱՌՐՍՈՒԹՅԱՆ ՄԻ ԻՆՔՆԱՏԻԳ ԵՂԱՆԱԿ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

1. Լժային ձկնորսության եղանակներից առավել ինքնատիպը չանց-  
ով ձկնորսությունն է, որը, ըստ մեր զբառած նյութերի, կիրառվել  
է ՀՍՍՀ վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղում և, որքան էլ զար-  
մաևալի, Սևանի ավազանի այլ բնակավայրերում հայտնի չի եղել: Զան-  
գքն ունի երեք կեռիկ-մտտներ, որոնք ձևավորված են մեկ մետաղե  
հիմքից: Կեռիկներից երկուսը հավասար են և մի քիչ ցածր, իսկ մեջ-  
տեղիկը բարձր է ու երկար: Դա արվել է հեռւյալ կառուցումներով.  
Նախ, որ շանգը լիժը զցցելիս չընկնի քիթ ու բերնի վրա, շուռ չգա  
ու աստի շրի հատակում եղած մամուռներին ու խոտերին: Այնուհետև,  
շտորհիվ մեջտեղի բարձր մատի, շանգը լիժը զցցելիս, գործիքը շորջ-  
վում է այնպես, որ կեռիկները կանգնում են ուղիղ դիրքով /մեջտե-  
ղի բարձր կեռիկը նախատեսված է մեծ ձկների որսի համար/: Ազգագրա-  
կան նյութերը վկայում են, որ Կարճաղբյուրում կիրառվել է նաև  
երկամասնի շանգ, որը հավանաբար, այդ գործիքի նախնական տիպը պետք  
է համարել: Երբ այն զցցում էին լիժը, մեջտեղի երրորդ մատի բացա-  
կայություն հեռանքով շանգն քնկնում էր բերնիվայր՝ կեռիկները  
ներքև: Նման դեպքում մտնում էին շուրք և ուղղում շանգը:

2. Չանգի երկաթե հիմքն ունենում էր 3,5 սմ լայնք, մեջտեղի  
մեծ մասը՝ 23 սմ, իսկ կողքերի երկու փոքր մասներից յուրաքան-  
չյուրը՝ 16 սմ երկայնք: Մետաղե հիմքի կենտրոնում արվում էր  
փոքր անցք, որպեսզի ոսկրի լայն մասը կապվեր հիմքին: Ոսկրը լի-  
նում էր խոշոր կամ մալր եղջերավոր անասունի առջևի թիակներից  
(երբեմն նաև խոշոր եղջերավոր անասունի մակառի լայն ոսկրից)՝ լավ  
մաքրում էին և հորմարեցնում շանգի երկաթե հիմքի շափերին: Զան-  
գի հիմքից արված անցքից մտնում էին մետաղալար կամ կաշվե սրեմ  
և կապում մյուս երեսում, որի շտորհիվ ոսկրի մի ծայրը հուսալիոր-  
րեն ամրացվում էր երկաթե հիմքին, որի մյուս զլիւում ևս անցք էին  
անում, անցկացնում դաբադած կաշվի սրեմ, որի ծայրերը կապելով,  
օղակ էին անում, 25-30 սմ երկայնք ունեցող շանգի թելի մի ծայրը  
կապում էին օղակին, մյուսը՝ ամուր փայտին, որն անհրաժեշտ էր

ընչպես շանգը նետելու, այնպես էլ, առավել ևս, ծուկը կեռիկներու մ քնկնելուց հետո, գործիքը լմից դուրս քաշելու համար:

3. Չանգի հիմքի վերջին մասին ամրացված պարանից 1,5-2 մ հաշված, փաթաթում էին կապարե բարակ թիթեղ-ծանրոցներ, որոնք դրվում էին երեք տեղ՝ ամեն կես մետրի վրա մեկ հատ: Գապար չլիսնելու դեպքում այն փոխարինվում էր մի քիչ խարտած բարակ ու երկար քարեբրով: Ծանրութեան շնորհիվ, շանգի թելը նստում էր լմի հատակին, որպեսզի ծուկը չկարողանար թելի տակով անցնել: Այն պեսք է առաջամասն անցնելը թելի վրայով, այլապես շանգով ծուկ որսալն անհնարին կլինեին: Չանգով առավելապես ծուկ էին որսում ձարմաղբյուրի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող և Աևաա լմին հարող, մոտ 10 մ բարձրութուն ունեցող բլրի վրա կանգնած, որը հայտնի է ,Չանգի պալ,, անվամբ:

4. Զկնորսը կանգնելով Չանգի պալին, շանգի պարանն օղակած հավաքում էր մի ձեռքին, իսկ մյուսում պահում գործիքը: Ապա փոքր-ինչ կոսնում էր, պարանը տանում-բերում, պտտեցնում օդում և նստում լիմք: Չանգն իջնում էր ջրի մեջ 6-7 մ խորութեամբ և նստում հատակին: Զկնորսն ուշադրութեամբ լայնում էր գործիքին, որը ջրի պարզութեան, ինչպես նաև շանգի վրա կապված ոսկրի շնորհիվ, շատ լավ երևում էր: Երբ ծուկն անցնում էր պարանի վրայով, ձկնորսը ակնթարթորեն դեպի իրեն էր ձգում պարանի ծայրին կապված փայտը: Արագ քաշելու շնորհիվ, շանգի կեռիկները խրվում էին ձկան մարմնի մեջ և ձկնորսը ջրից դուրս էր քաշում շանգը: Սակայն, որպեսզի ծուկն քնկներ կեռիկների մեջ, պեսք է առաջամասն անցնելը հատակին փոխած պարանի առավել հարմար տեղով:

5. Երբեմն շանգով ծուկ էին որսում երկուսով: Մեկը շանգն էր գցում, մյուսը կանգնում Չանգի պալի ստորին հատվածում, լմին ավելի մոտիկ և դիտում ջրի մեջ քնկած գործիքը: Երբ ծուկը լողում էր դեպի շանգը և ուզում անցնել շանգի պարանի վրայով, ներքևում սպասողը, որը մեծ մասամբ լինում էր մանկահասակ աղա, կանչում էր վերևում կանգնած շանգ գցողին. գգույշ, գգույշ, ապա, քաշա: Չանգ գցողն ակնթարթորեն դեպի վեր էր ձգում շանգի թելին կապված փայտը, ուժեղ հարվածներով՝ շանգի կեռիկները որսում էին ծուկը: Չանգով ձկնորսութունը պահանջում էր հմտութուն և պահն օգտագործելու ժողովրդական: Այդ եղանակով ծուկ էին որսում մայիս-հունիս և փետրվար-մարտ ամիսներին՝ ձկների ձվադրութեան ժամանակ՝ դրանց խաղի տեղերում:

6. Տարեց բախասացների վկայություններ, Չանգի պալ անունը հայտնի է եղել իրենց ձեռնարկին ու պապերին: Այս հանգամանքը թույլ է տալիս կարծելու, որ սույն որսածևը կարճադրյուրում կիրառվել է XIX դ. կեսերից: Չնայած ջրի մակարդակի իջնելու հետևանքով, լիճը բավական հեռացել է քարափից, իսկ որսածևը վերջին երեք տասնամյակում մոռացություն տրվել, այդուհանդերձ, այսօր ևս Չանգի պալ անունն օգտագործվում է գյուղի բնակչության բախավոր խոսքում: Դա մատնանշում է այդ որսածևի հետ կապված երբեմնի ավանդույթների կենսունակությունը:

Է. Խ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱԻ

ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ԱՌԱՄՊԵԼԻ  
ՄԻՍՏԵՐԻԱԼ ՄՇԱԿՄԱՆ ՏԱՐԻՐԵԸ

1. Ասողային դիցապատման հայկական ավանդության մեջ Օրիոնի համաստեղությունը Հայկի էր կոչվում: Ինչպես հայտնի է, Օրիոնը նշան էր բռնել Հյուսիսային կիսագնդի ամենավաղ աստղին՝ Սիրիոսին, ինչպես Հայկը՝ Բելին: Համապատասխանաբար կարելի է ենթադրել, որ Սիրիոսը Բելի աստղային խորհրդանիշն է եղել:

Հուև. βελλος - ուևի նիգակ, նեո, կայծակ, խայտ /կարիճի/ իմաստները և համապատասխանում է ամբողջային աստծու կերպարանափոխությանը կամ նրա զենքին: Բելի անվան մեկնությունը ցույց է տալիս, որ հայկական առասպելի հնագույն կառուցվածքում Հայկի հակառակորդի կերպարին հավանաբար համապատասխանել է ոչ թե բարեկական, այլ ասորական Bēl -ը, որը մեծապես պաշտամունքի առարկա է եղել Նապոլովիայում, Վիլիկիայում, Ասորիքում և Միջերկրական ծովի ավազանում տակավին մ.թ.ա. II հազ.:

2. Հայկը և Բելն ուևեցել են համանման զենքեր և, քստ առասպելի, նրանք այնքան ինչստ շեն հակադրված, քնդ որում, Նադմոսը՝ Հայկի թողը հայկական պատումում, քստ հուևակական պատումի, Ազենորի որդին է և Բելի երկվորյակ եղբայրը /Մարաբոն, IX, 5, 18/: Ազենորը համապատասխանում է Ամինտորին /Արեսին/, որը Օրմենի /Արմենի/ որդին է: Այդ դեպքում է, որ Օրմենը Բելի հայրն է: Քանի որ Հայկն ու Արմենը նույն անձնավորությունն են, ապա Հայկի և Բելի հարաբերությունը հոր և որդու հարաբերություններ են և, հետևաբար՝ ծագումով հողածին են, վիշապագուևը: